



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

07.05.2018թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ  
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/57

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Թեոֆարմա» ՍՊԸ-ի կողմից 19.04.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/57 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

### 1. «Թեոֆարմա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Թեոֆարմա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 19.04.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՍՄԿԲ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնման ընթացակարգի 12-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը կազմված է այնպես, որ իր մեջ պարունակում է խտրական պահանջ, ուղղորդում է միայն մեկ բնութագրով դեղի գնման, մինչդեռ նույն քիմիական անվանմամբ գոյություն ունի երկրորդ գրանցված տարբերակ, որը զրկում է ընթացակարգին մասնակցելու Ընկերության հնարավորությունը:

Ընկերությունը վկայակոչել է ՀՀ Կառավարության 2013թ. մայիսի 2-ի թիվ 502-Ն որոշման 3-րդ մասի 1-ին կետը, որի համաձայն՝ դեղերի գնումների պլանում գնման առարկա հանդիսացող դեղի գնման տեխնիկական բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող դեղին ներկայացվող հետևյալ պահանջներին՝ մասնավորապես դեղի անվանումը նշելիս գրվում են դեղի միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները: Եթե Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) առկա են նույն բաղադրատարրերով դեղի այլ գրանցված տարբերակներ, ապա դեղի գնման տեխնիկական բնութագիրը կազմվում է այնպես, որ բացառվի որևէ գրանցված տարբերակի մրցույթին չմասնակցելու հավանականությունը, և ապահովվի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար (հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան):

Ընկերությունը բողոքով խնդրել է վերանայել «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՍՄԿԲ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) 12-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը՝ կազմելով Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում նշված տարբերակներին համապատասխան, որպեսզի «Թեոֆարմա» ՍՊԸ-ն հնարավորություն ունենա մասնակցել գնման ընթացակարգին:

Ընկերությունն ի լրումն բողոքի 19.04.2018թ. ներկայացված գրությամբ խնդրել է պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ Ընթացակարգի հրավերում կատարել համապատասխան փոփոխություններ՝ տեխնիկական բնութագրերը համապատասխանեցնել ՀՀ Կառավարության 2013թ. մայիսի 2-ի թիվ 502-Ն որոշման 3-րդ մասի 1-ին կետի պահանջներին:

«Թեոֆարմա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.04.2018թ. ժամը 11:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը, միևնույն ժամանակ հայտնել է, որ իր կողմից բողոքարկվում է Ընթացակարգի հրավերի 11-րդ չափաբաժնով նախատեսված «սևոֆլուրան» դեղի տեխնիկական բնութագիրը:



## 2. «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 20.04.2018թ. թիվ 05/152 գրությամբ հայտնել է, որ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում օգտագործվում է ASKA-1295 («VAPOR 2000 SEVOFLURANE» Plug in Adapter S-2000, M35054-32) ներշնչական անզգայացնող միջոցների գոլորշացուցիչը՝ Quil Fil համակարգով:

Անզգայացման էֆեկտիվության, անզգայացման ընթացքում պացիենտի և բժշկական անձնակազմի անվտանգության տեսանկյունից ելնելով, օգտագործվող դեղորայքի թողարկման ձևը հստակ պետք է համապատասխանի օգտագործվող գոլորշացուցիչին, ուստի կազմակերպությանը անհրաժեշտ է Quil Fil փականային համակարգով տարա, որը կհամապատասխանի Պատվիրատուի կողմից շահագործվող գոլորշացուցիչին: ASKA-1295 գոլորշացուցիչի և ֆլակոնի միացման տեղում կա փական: Օգտագործվող դեղորայքի տարայի վրա «Quil Fil» ներարկման համակարգի բացակայությունը խոչընդոտում է դեղորայքի լցմանը գոլորշացուցիչի մեջ:

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը կազմված է Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանի համաձայն, առաջնորդվելով ՀՀ Կառավարության 2013թ. մայիսի 2-ի թիվ 502-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի պահանջներով. մասնավորապես՝ դեղերի գնումների պլանում գնման առարկա հանդիսացող դեղի գնման տեխնիկական բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող դեղին. ներկայացվող հետևյալ պահանջները՝

1. դեղի անվանումը նշելիս գրվում են դեղի միջազգային համընդհանուր կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները: Եթե Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) առկա են նույն բաղադրատարրերով դեղի այլ գրանցված տարբերակներ, ապա դեղի գնման տեխնիկական բնութագիրը կազմվում է այնպես, որ բացառվի որևէ գրանցված տարբերակի մրցույթին չմասնակցելու հավանականությունը, և ապահովվի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր

մասնակիցների համար (հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան):

2. դեղաձևը նշելիս հիմք է ընդունվում «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի «գ» կետով սահմանված դեղաձևերը (օրինակ՝ դեղահատ, հաբ, պատիճ, կաթիլ և այլն (հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր))):

3. դեղաչափը նշելիս բազմաբաղադրատարր դեղերի դեպքում նշվում է յուրաքանչյուր բաղադրատարր դեղի դեղաչափը (հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր))):

4. թողարկման ձևը նշելիս նկարագրվում են արտաքին ձևավորման բնութագրիչները (օրինակ՝ ապակե տարա և այլն (հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր))):

Տեխնիկական բնութագիրը կազմելիս պատասխանատու ստորաբաժանումը առաջնորդվել է վերը նշված չափորոշիչներով և ՀՀ առողջապահության նախարարության կողմից առաջարկված «ՀՀ-ում գրանցված դեղորայքի տեխնիկական բնութագրերի տեղեկատուով ([www.moh.am](http://www.moh.am))»,

Հ/Հ	Անվանում	Տեխնիկական բնութագիր*	Չ/Մ
1085	Սևոֆլուրան	Սևոֆլուրան sevofluran հեղուկ շնչառման 100%-250մլ, փակող համակարգով, տարա	հատ

Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր)-ի համաձայն՝

1. դեղի անվանումը- սևոֆլուրան (դեղի միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանում)

2. դեղաձևը- հեղուկ շնչառման

3. դեղաչափը - 100%-250մլ

4. թողարկման ձևը, որը տվյալ պարագայում շատ կարևոր պայման է- պլաստիկ տարա՝ Quik fil փակող համակարգով:



Պատվիրատուի կարիքներից ելնելով մատակարարման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագրեր սահմանելը Պատվիրատուի օրենքով ամրագրված իրավունքն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Տեխնիկական բնութագրում հստակ, մանրամասն և ամբողջությամբ նկարագրված է այն դեղորայքը, որն անհրաժեշտ է Պատվիրատուին, ելնելով օգտագործվող գոլորշացուցիչի տիպից (ASKA-1295, ներշնչական անզգայացնող միջոցների գոլորշացուցիչը՝ Quil Fil համակարգով):

Պատվիրատուն նշել է, որ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին անհրաժեշտ է ապահովել օգտագործվող սարքավորման և ձեռք բերվող ապրանքի համապատասխանությունը: Նշված պահանջը հնարավոր է բավարարել միայն Quil Fil փականային համակարգով պլաստիկ տարայի օգտագործմամբ, որը համապատասխանում է օգտագործվող գոլորշացուցիչին, քանի որ այլ տարաներ տեխնիկապես անհամապատասխանելի են ASKA-1295 գոլորշացուցիչին:

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 26.04.2018թ. թիվ 05/159 գրությամբ հայտնել է նաև, որ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում օգտագործվող ներշնչական անզգայացնող միջոցների Quil Fil համակարգով գոլորշացուցիչը ունի փական, որը խանգարում է այլ ձևով դեղորայքի լցմանը գոլորշացուցիչի մեջ: Պատվիրատուն այս տարի ձեռք է բերել Ընկերության կողմից մատակարարվող «Սևոֆլուրան» 100%-250մլ ապակե շիկ, հեղուկ շնչառման դեղանյութից: Սակայն օգտագործման ժամանակ առաջացել են խնդիրներ՝ նշված փականը խանգարում է ձագարի կամ այլ իրի միջոցով դեղորայքի լցմանը (դեղանյութի մի մասը թափվել է):

Պատվիրատուն գրությանը կից ներկայացրել է վերոնշյալ սարքի տեխնիկական անձնագիրը և նկարները:

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.04.2018թ. ժամը 11:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. ԳԲԽ-ԱՄ-2018/57 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ԳԲԽ-ԱՄ-2018/57 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղանյութերի և բժշկական նշանակության ապրանքներ կազմակերպվել է «ՍՄԿԿ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 11-րդ չափաբաժնով նախատեսվել է գնման առարկայի հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

11	սևոֆլուրան; 100%; 250մլ պլաստիկ տարա Quik fil փակող համակարգով; հեղուկ շնչառման	սևոֆլուրան; 100%; 250մլ պլաստիկ տարա Quik fil փակող համակարգով; հեղուկ շնչառման	հատ
----	---	---	-----

3. ՀՀ առողջապահության նախարարության [www.moh.am](http://www.moh.am) պաշտոնական կայքէջում տեղադրված ՀՀ-ում գրանցված դեղորայքի տեխնիկական բնութագրերի տեղեկատուի համաձայն՝ սևոֆլուրան դեղի համար նախատեսված է հետևյալ տեխնիկական բնութագիրը. **«Սևոֆլուրան sevofluran հեղուկ շնչառման 100%-250մլ, փակող համակարգով, տարա»:**

**4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով «Թեոֆարմա» ՍՊԸ-ի 19.04.2018թ. բողոքը, «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 20.04.2018թ. թիվ 05/152 և 26.04.2018թ. թիվ 05/159 գրությունները և կից փաստաթղթերը, «ՍՄԿԿ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման



ընթացակարգի հրավերը, գտնում են, որ «Թեոֆարմա» ՍՊԸ-ի 19.04.2018թ. բողոքն անհիմն է և ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-4-րդ մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին: որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության

որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառության (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղանյութերի և բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՍՄԿԿ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 11-րդ չափաբաժնով նախատեսվել է գնման առարկայի հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

11	սևոֆլուրան; 100%; 250մլ պլաստիկ տարա Quik fil փակող համակարգով; հեղուկ շնչառման	սևոֆլուրան; 100%; 250մլ պլաստիկ տարա Quik fil փակող համակարգով; հեղուկ շնչառման	հատ
----	--	---	-----



ՀՀ կառավարության 02.05.2013թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի 1-4-րդ ենթակետերի համաձայն՝ դեղերի գնումների պլանում գնման առարկա հանդիսացող դեղի գնման տեխնիկական բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող դեղին ներկայացվող հետևյալ պահանջները՝

1) դեղի անվանումը նշելիս գրվում են դեղի միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները: Եթե Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) առկա են նույն բաղադրատարրերով դեղի այլ գրանցված տարբերակներ, ապա դեղի գնման տեխնիկական բնութագիրը կազմվում է այնպես, որ բացառվի որևէ գրանցված տարբերակի մրցույթին չմասնակցելու հավանականությունը, և ապահովվի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար (հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր)).

2) դեղաձևը նշելիս հիմք է ընդունվում «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի «գ» կետով սահմանված դեղաձևերը (օրինակ՝ դեղահատ, հաբ, պատիճ, կաթիլ և այլն (հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր)).

3) դեղաչափը նշելիս բազմաբաղադրատարր դեղերի դեպքում նշվում է յուրաքանչյուր բաղադրատարր դեղի դեղաչափը (հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր)).

4) թողարկման ձևը նշելիս նկարագրվում են արտաքին ձևավորման բնութագրիչները (օրինակ՝ ապակե տարա և այլն (հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր)).

ՀՀ առողջապահության նախարարության [www.moh.am](http://www.moh.am) պաշտոնական կայքէջում տեղադրված ՀՀ-ում գրանցված դեղորայքի տեխնիկական բնութագրերի տեղեկատուի համաձայն՝ սևոֆլուրան դեղի համար նախատեսված է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

**սևոֆլուրան**

**Սևոֆլուրան sevofluran հեղուկ շնչառման 100%-250մլ, փակող համակարգով, փարա**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Պատվիրատուն հայտնել և հիմնավորել է, որ իր կողմից շահագործվող ASKA-1295 («VAPOR 2000 SEVOFLURANE» Plug in Adapter S-2000, M35054-32) ներշնչական անզգայացնող միջոցների գոլորշացուցիչը կարող է շահագործվել միայն Quil Fil համակարգով, ուստի Պատվիրատուին անհրաժեշտ է որպեսզի ձեռքբերվող «սևոֆլուրան» դեղի թողարկման ձևը ապահովվի Quil Fil փակող համակարգի առկայությունը, հակառակ դեպքում իրականացվող գնումը չի կարող դիտարկվել արդյունավետ և Պատվիրատուի կարիքին համապատասխան:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 11-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը, գտնում եմ, որ այն կազմված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 02.05.2013թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշման պահանջներին համապատասխան, այն խտրական չէ և չի հանգեցնում գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, համարժեք է Պատվիրատուի այն կարիքին որի բավարարման նպատակով կազմակերպվել է տվյալ գնումը: Մասնավորապես՝ Պատվիրատուի կողմից ձեռքբերվող «սևոֆլուրան» դեղը պետք է համապատասխանի Պատվիրատուի կողմից շահագործվող ներշնչական անզգայացնող միջոցների գոլորշացուցիչին: Տվյալ դեպքում ASKA-1295 մոդելի գոլորշացուցիչը շահագործվում է Quil Fil փակող համակարգի միջոցով, հետևաբար ձեռքբերվող դեղը պետք է համապատասխանի նշված սարքավորման գործառնական հատկանիշներին:

Դրա հետ մեկտեղ, արձանագրում եմ նաև, որ Ընթացակարգի 11-րդ չափաբաժնով նախատեսված «սևոֆլուրան» դեղի տեխնիկական բնութագիրը որևէ պահանջ կամ հղում չի պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էքքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, հետևաբար և չի սահմանափակում հնարավոր մասնակիցների ցանկը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Թեոֆարմա» ՍՊԸ-ի կողմից 19.04.2018թ. ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Թեոֆարմա» ՍՊԸ-ի կողմից 19.04.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**Գնումների հետ կապված  
բողոքներ քննող անձ՝**



**ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**